

# ՀԱՄԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ

Արդ, Աստուածային օրէնքը հաստատուն ու անեղծանելի մնալու համար, տպուեցաւ մարդու մտքին մէջ եւ կը կոչուի բնական օրէնք, կամ գրի առնուեցաւ աստուածային յայտնութեամբ եւ կը կոչուի գրաւոր կամ շնորհական օրէնք: Օրինագէտներ կամ անոնք, որոնց յայտնուած է օրէնքի պաշտպանութիւնը, ջանք կը թափեն ամէն օր հրատարակել անոնք ամենուն եւ յորդները պարտաւոր են հնազանդիլ անոնց եւ փութալ կատարելու:

Կան եւ եկեղեցական ու հասարակական օրէնքներ, որոնք թէեւ յատուկ կերպով Աստուծմէ չեն հրամայուած, սակայն կը նպաստեն Աստուծոյ կամքին կատարման. եկեղեցականը կը վերաբերի ճշմարիտ կրօնքի բարեկարգութեան, իսկ հասարակականը բարւոք կառավարումին: Ուստի ով որ այս օրէնքներուն չի հնազանդիր, արժանի է պատիժներու՝ իբրեւ Աստուծոյ կամքին հակառակող:

Հնազանդութիւնը հնազանդուողներուն ցմահ պարտական կը դարձնէ: Եթէ մէկը մէկ անգամ անհնազանդ գտնուի, առաջին վարքն ալ կը կորսնցնէ, որովհետեւ մարդ ի՞նչ շահ կը ստանայ օրէնքի հնազանդելուն, եթէ ի վերջոյ օրինազանց ելլէ աշխարհէն:

Մարդիկ այն գործողութիւնները որոնք պիտի ընէին եւ չկատարուելու պարագային որեւէ տեսակի պատճառաբանութեամբ կարող են իրենք գիրենք անմեղադրելի ներկայացնել:...

Հարունակելի

## ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈՂԻՆԵՐԸ, ԳԵԻՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԵՆ

### ԿԱՆԱՐԳՈՒԹԵԱՆ ՀԵՏԵԱՆՔՆԵՐ

Կախարդութեան հետեւանքները կրնան այլազան ըլլալ: Ստորեւ կ'ուզեմ ընթերցողին տեղեկացնել, թէ ինչ կ'ըսեն անոնցմով անձամբ զբաղողները:

#### ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրիշ պարագայ մը կը գրէ. «Ինչ որ կը կարդամ Աստուածաշունչին մէջ՝ անմիջապէս կը մոռնամ: Եկեղեցւոյ մէջ խօսուածն ալ ազդեցութիւն չ'ըներ իմ վրաս, շատ քիչ բան կը յիշեմ: Բայց շատ կ'ուզեմ ամէն ինչ յիշել եւ ամրացնել սրտիս մէջ: Օ՛, ինչքան յաճախ կ'ուզեմ ետ բերել մանուկ օրերուս հաւատքը: Ինչո՞ւ չեմ յաջողիր: Որովհետեւ անցեալին հմայողներու դիմած եմ եւ անձամբ ալ հմայութեամբ զբաղած»:

Յստակ է, որ Աստուծոյ խօսքը չհասկնալուս պատճառը ասիկա է: Հոգին այնպէ՛ս խճճուած է Սատանային գործերով, որ Աստուծոյ խօսքը անհասանելի եւ անհասկնալի դարձած է իրեն համար: Փշոտ ու տատասկոտ դարձեր է իր սիրտը, եւ կենդանի խօսքին սերմը չի կրնար աճիլ այնտեղ: Անձ մը հետեւեալ վկայութիւնը կու տայ ըսելով. «Քսան տարի առաջ ծանրօրէն հիւանդացայ եւ ինձի խորհուրդ տուին հմայողին դիմել: Այդպէս ալ ըրի: Եւ հիմա կը զգամ, որ Աստուծոյ առջեւ աղօթած ատեն ատիկա խոչընդոտ կը դառնայ իմ դիմաց...»


Շարունակելի

### ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



## ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119-105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 20 ՄԱՅԻՍ, 2012

ԹԻՒ 21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 12.12-23

### ԵՐԿՐՈՐԳ ԾԱՂԿԱԶԱՐԳ

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն մը, որ Զատիկուան տօնին առիթով Երուսաղէմ եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու գայ, արմաւենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով. «Ովսաննա՛, օրհնեա՛լ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էլ մը գտնելով նստաւ անոր վրայ, ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է. «Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛ աղջիկ, որովհետեւ թագաւորդ քեզի կու գայ իշու մը աւանակին վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ՝ այն ատեն յիշեցին թէ այս կատարուածները Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ գրուածն էր որ կատարեցին: Բոլորն ալ կը վկայէին թէ Յիսուս Ղազարոսը կանչեց գերեզմանէն եւ գայն մեռելներէն յարուցանեց: Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ լսած էին թէ ինչպէս ան յարութեան հրաշքը գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին. «Կը տեսնէ՞ք որ բան մըն ալ չենք կրնար ընել. ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլիայի Բեթսայիղա քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս եկաւ Անդրէասին ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»:

### ՍԱՂՄՈՍ 3.1-6

Ո՛վ Տէր, իմ թշնամիներս որչա՛փ շատցան: Իմ վրաս ելլողները շատուր են: Շատերը իմ անձիս համար կ'ըսեն. «Ասոր փրկութիւն չկայ Աստուծմէ»: Բայց, ով Տէր, դուն ես իմ ասպարս, Իմ փառքս ու իմ գլուխս բարձրացնողը: Իմ ձայնովս Տիրոջը կանչեցի ու իր սուրբ լեռնէն ինձի պատասխանեց: Ես պառկեցայ ու քնացայ: Արթնցայ, վասն զի Տէրը զիս պաշտպանեց: Ես պիտի չվախնամ քիւրաւոր ժողովուրդներէն, որոնք իմ չորս կողմս պատեցին:

**ԵՐԿՐՈՐԴ ԾԱՂԿԱԶԱՐԳ**

Համբարձման յաջորդող Ս. Զատ-  
կի եօթներորդ Կիրակին կը կոչուի  
Երկրորդ Ծաղկազարդ: Այս առթիւ  
Ծաղկազարդի ընթերցուածները ու  
շարականները նոյնութեամբ կը  
կրկնուին:

Երկրորդ ծաղկազարդի տօնախմ-  
բութիւնը սահմաններ է Ներսէս Շը-  
նորհալիին եղբայրը՝ Գրիգոր Վկա-  
յասէր կաթողիկոսը, հիմնուելով Գը-  
րիգոր Լուսաւորչի Խոր Վիրապի մէջ  
գտնուած ժամանակ պատահած մէկ  
աւանդական դէպքի վրայ:

Գրիգոր Լուսաւորիչը երբ կը գտ-  
նուէր Խոր Վիրապին մէջ, անոր կը  
սպասարկէր հրեշտակ մը: Համբարձ-  
ման չորրորդ օրը՝ Կիրակի օր, հրեշ-  
տակը չերեւնար: Միւս օրը Լուսաւո-  
րիչը կը հարցնէ պատճառը եւ կը տե-  
ղեկանայ, որ այդ օրը երկնային քա-  
հանայապետութիւնը կը տօնէր Յի-  
սուսի երկինք համբառնալը եւ նոյն  
օրը չորրորդ դասակարգութեան  
տօնն էր:

Գրիգոր Վկայասէր կաթողիկոսը  
յատուկ շարականով կը ճոխացնէ  
երկրորդ Ծաղկազարդի Կիրակին,  
որուն օրհնութիւնն է «Մեծահրաշ  
այս խորհուրդը աւանդութեամբ առ  
մեզ հասեալ, զոր հոգևոց լուսատուն  
ի պաշտպանէն իւրմէ լուեալ, եթէ  
տօն մեծ է այսօր իմոյ դասուն որ ի  
յերկինս»:

**ԱՐՏԱՔԻՆ ԵՐԵՒՈՅԹԸ ԿԱՐԵՒՈՐ ԶԷ՝  
ԱՅԼ ՀՈԳԻԻ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ**

- 1.- Բայց Տէրը Սամուէլին ըսաւ.-  
«Անոր երեւոյթին ու հասակին  
երկայնութեան մի՛ նայիր, քանզի  
ես քանակի անարգեցի, որով-  
հետեւ Աստուած մարդուն նման չի  
նայիր. քանզի մարդը երեւցածին  
կը նայի, բայց տէրը սրտին կը  
նայի»: (Ա. Թագաւորաց 16.7)
- 2.- Վայելչութիւնը սուտ է ու գե-  
ղեցկութիւնը ունայն է, սակայն  
Տիրոջմէ վախցող կիներ պիտի  
գովուի: (Առ. 31.30):
- 3.- Ձեր գարդը արտաքին թող ըլլայ,  
ո՛չ մագերուն յարդարանքը, ո՛չ  
ոսկեղէնները եւ ո՛չ ալ գարդա-  
րուն հագուստները, այլ՝ սրտին  
մէջ ծածկուած, հեզ եւ խաղաղ  
հոգիի մը անկորնչելի գեղեցկու-  
թիւնը. եւ ա՛յդ է թանկագինը Աս-  
տուծոյ համար (Ա. Պետրոս 3.3-4):  
Կարդա՛ նաեւ՝ Բ. Կորնթացիս (5.4-10)

**ԻՄԱՍՏՈՒՆ ԽՕՍՔԵՐ**

Յոյսը հաւատքին յենարանն է,  
Վա՛յ անոր, որ այդ երկու անթա-  
ցուպերէն զրկուած կը մնայ:

Աստուած անգամ յոյսով ապրե-  
ցաւ, երբ իր Որդին Գեթսեմանիէն  
Գողգոթա կը բարձրանար. վաղուան  
յարութեան յոյսն էր ատիկա:

Յոյսը եւ հաւատքը տկարները  
հերոս եւ հերոսները Աստուած կ'ը-  
նէ:

Հայ Եկեղեցին Յոյսը եւ Հաւատքը  
Մկրտութեան օրը կը դրոշմէ մանու-  
կին ցակատը Սրբալոյս Միլոռնով:

**ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ**

**ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ**

**Աղբառնետուն ողորմութիւն  
ընելու մասին**

Անոնք որ շատ հարստութիւն կը  
հաւաքեն եւ ողորմութիւն չեն սեր-  
մաներ, դատարկ ձեռքով կը մեկնին  
այս աշխարհէն եւ կ'առաքուին ան-  
տանելի եւ անողորմ կրակը: Եւ Տէրը  
այս մէկը կ'իմացնէ երբ կ'ըսէ.  
«Աշխարհիկ հարստութիւնը գործածե-  
ցէք այնպէս մը որ Աստուծոյ բարե-  
կամութիւնը չահիք. որպէսզի երբ այս  
աշխարհէն ելլէք յաւիտենական  
յարկերուն մէջ ընդունին» (Ղուկ.  
16.9): Նոյնը Պօղոս Առաքեալ կ'ըսէ.-  
«Միւրոյ հետամուտ եղէք ու նաեւ  
նախանձախնդիր աղքատներու ողոր-  
մութեան, որովհետեւ դուք ալ Քրիս-  
տոսէ ողորմութիւն պիտի ստանաք»  
(Ա. Կոր. 14.1): Ո՛չ մէկ բան կը թե-  
թեւցնէ մեղքին ծանրութիւնը, բացի  
աղքատին տրուած ողորմութենէն եւ  
գութէն. ինչպէս սուրբ Դանիէլ Նա-  
բուզոդոնոսորին կ'ըսուցանէր, երբ  
ան իր մեղքերուն պատճառաւ հիւան-  
դացած էր. մարգարէին կը հարցնէր  
թէ ինչպիսի դեղեր կան այս հիւան-  
դութեան համար եւ Դանիէլ որպէս  
բժիշկ իրեն մօտենալով կ'ըսէր. «Ո՛վ  
արքայ, ո՛չ պահքը, ո՛չ արթուն ըլլալը,  
ո՛չ քուրճը եւ ո՛չ ալ առանձնութիւնը  
կրնան օգտակար ըլլալ, այլ գնա՛ եւ  
մեղքերդ ողորմութեամբ քաւէ՛, իսկ  
անօրէնութիւններդ՝ աղքատներուն  
գթալով. այս արարքն է որ քեզպիտի  
արդարացնէ եւ այս ճանապարհն է որ  
քեզ յաւիտենական կեանք պիտի  
առաջնորդէ» (Դանիէլ. 4.27)

**ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳԱՏՈՒ**

**ՄՏԻ ԼՈՒՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ  
ԽՆԴՐԵԼՈՒ ԱՂՕԹՔ**

Շնորհակալութիւնս քեզի, ո՛վ  
Աստուած՝ մեր տէրը, որ քու տեսանելի  
լոյսով ուրախացուցիր մեզ՝ քու բոլոր  
արարածներդ, իսկ քու պատուիրաննե-  
րուդ հոգեւոր լոյսով լուսաւորեցիր  
քեզի հաւատացողները: Մե՛զ ալ գորա-  
ցո՛ւր, Տէ՛ր, որպէսզի կարենանք քու  
պատուիրաններդ պահել այսօր եւ ամէն  
ատեն, որպէսզի լուսաւորուած միտ-  
քով՝ միշտ քու կամքդ կատարենք եւ քու  
պատրաստած բարիքներուդ հասնինք  
բոլոր սուրբերուդ հետ միասին, մեր  
Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի  
պարգեւած շնորհովն ու մար-  
դասիրութեամբը: Ամո՛ր կը վայելեն  
փառքը, իշխանութիւնն ու պատիւը,  
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւի-  
տենից: Ամէն:

Դո՛ւն եւ մեր խաղաղութիւնն ու  
կեանքը, ո՛վ Միածին Որդի Աստուծոյ,  
մեր Տէրն ու փրկիչը՝ Յիսուս Քրիստոս:  
Տո՛ւր մեզի քու խաղաղութիւնդ, որ  
սուրբ առաքելներուդ շնորհեցիր՝ ա-  
նոց վրայ փչելով կենդանացնող եւ  
ամենագոր քու Սուրբ Հոգիդ: Որպէսզի  
մե՛նք ալ աշխարհէն եկող ամէն տեսա-  
կի փորձութիւններէն խաղաղած՝ տա-  
նար եւ բնակարան դառնանք աստուա-  
ծային շնորհներուդ, եւ շնորհակա-  
լութեամբ փառաւորենք քեզ՝ ո՛վ Քրիս-  
տոս, մեր Աստուածը, Հօրը եւ Սուրբ  
Հոգիդ հետ միասին. այժմ եւ միշտ եւ  
յաւիտեանս յաւիտենից: Ամէն

**ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐԸ**

**23.12-35**

*Յաջորդ առաւօտ կարգ մը հրեաներ իրարու քով եկան եւ իրենք գիրենք նը-գովքի տակ դնելով երգուժ ըրին չուտել եւ չխմել՝ մինչեւ չսպաննեն Պօղոսը: Քառասուն հոգիէն աւելի էին այս եր-դումը ընողները: Ասոնք մօտեցան քահանայապետներուն եւ երէցներուն եւ ըսին. «Մենք մեզ նգովքի տակ դնե-լով երգուժ ըրինք բան չճաշակել, մին-չեւ Պօղոսը չսպաննենք: Դուք Ատեա-նին անուճով հազարապետին լուր դը-կեցէ՛ք որ գայն ձեզի դրկէ, պատճառա-բանելով թէ կ'ուզէք իր մասին աւելի ստոյգ տեղեկութիւն ունենայ: Իսկ մենք պատրաստ կ'ըլլանք արդէն եւ տակաւին հոս չհասած՝ կը սպաննենք գրինք»:*

*Պօղոսի քեռորդին այս դաւադրու-թիւնը իմանալով, եկաւ զօրանոց եւ Պօղոսին պատմեց: Պօղոս հարիւրա-պետներէն մէկը կանչելով ըսաւ. «Այս պատանին հազարապետին տար, որով-հետեւ իրեն ըսելիք մը ունի»:* Հարիւ-րապետը գայն հազարապետին տարաւ եւ ըսաւ. «Բանտարկեալ Պօղոսը գիտ կանչեց եւ խնդրեց որ այս պատանին քեզի բերեմ, որովհետեւ քեզի ըսելիք մը ունի»:

*Հազարապետը պատանիին ձեռքէն բռնելով մէկ կողմ տարաւ եւ հարցուց. «Ի՞նչ ունիս ըսելիք»:*

**ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ**

**ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿ**

**5.13-21**

Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին հաւատացողներուդ, որպէսզի գիտակցիք թէ յաւիտեանական կեանք ունիք: Ուստի համարձակ կերպով կը դիմենք Աստուծոյ, այն վստահու-թեամբ, որ երբ իր կամքին համաձայն բան մը խնդրենք՝ կը լսէ մեզ: Եւ երբ գիտենք թէ մեր խնդրամբները կը լսէ, գիտենք նաեւ թէ պիտի ստանանք ինչ որ կը խնդրենք իրմէ:

Երբ տեսնես թէ հաւատացեալներէն մին գործեց մեղք մը որ մահացու չէ, աղօթէ Աստուծոյ որ կեանք տայ անոր: Ասիկա կ'ըսեմ միայն անոնց համար որոնց մեղքերը մահացու չեն, որովհետեւ մահացու մեղքեր ալ կան, որոնց համար չեմ ըսեր որ աղօթէք: Ամէն անիրաւութիւն մեղք է, բայց ամէն մեղք մահացու չէ:

Գիտեմք թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի մեղանչեր, այլ Աստուծոյ ծնունդը՝ Քրիստոս, կը պահպանէ զայն եւ չարը անոր չի մօտենար: Թէեւ ամբողջ աշխարհը չարին ենթակայ ըլլայ, մենք գիտենք թէ Աստուծմէ ենք: Եւ գիտենք թէ Աստուծոյ Որդին եկաւ ու բացաւ մեր միտքերը, որպէսզի քանչևանք հշմարիտ Աստուածը: Մենք միացած ենք հշմարիտ Աստուծոյ եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի: Ա՛ն է հշմարիտ Աստուածը եւ յաւիտեանական կեանքը:

Որդիակցներս, դուք ձեզ կուռքերէ հեռու պահեցէ՛ք:

**ՀԱՐՈՒՆԱԿԵԼ**

**ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ**

**ԱՍՏՈՒՎԾԱՀՈՒՄՆԵՆ: ՄԻՇՏ**

**ԱՍՏՈՒՎԾԱՀՈՒՄՆԵՆ ԿԱՐԴԱՆՔ:**